Զանգեզուրի ընտանիքի մեջ մայրիշխանության՝ մատրիարխատի փուլից պահպանված բնորոշ սովորություններից մի քանիսն առիթ ունեցանք վերը նկարագրել՝ խոսելով նոր ամուսնական զույգ կազմելու հետ շաղկապված ծիսական ձևերի մասին։ Այսպես՝

տղայի մորից էր բխում հարս ընտրելու նախաձեռնությունը.

դիմումն ուղղված էր աղջկա մորը, որը խորհրդակցում էր նախ և առաջ իր եղբոր հետ.

համաձայնություն տալուց հետո ապագա զոքանչն էր հովանավոր հանդիսանում փեսացուին.

եկեղեցական կարգը կատարելուց հետո հարսանեկան խնճույքը տեղի էր ունենում աղջկա տանը։

Այս և այլ մանրամասնությունները ավելի կամ պակաս ցայտուն կերպով կրկնվում էին նույնպես Զանգեզուրից դուրս թե՛ մերձավոր և թե՛ հեռավոր հայաբնակ գավառներում և հատկանշական են հայկական էթնոսի համար։ Այստեղ էլ ընտանիքի ներսում առանձնապես շեշտվում էր կնոջ առաջնակարգ տեղը։ Ըստ աշխատանքի սեռային բաժանման խիստ կերպով սահմանագծված էր, որ ամբողջ տնային ներսի տնտեսությունը կանանց գործ է, արտաքինը՝ դրսինը՝ տղամարդկանց[109]։

Երեխաների կրթությունը հենց սկզբից նպատակ էր դնում աշխատանքի հենց այդպիսի սեռային բաշխումը։ Նույնիսկ տղամարդ նօֆյարը, ծառան, որը ճաշում էր և նստում՝ վեր էր կենում տղամարդկանց խմբի հետ, ազատված էր տնային կանացի աշխատանքներից և ազատորեն դիմում էր տան փոքրիկ հարսներին կամ աղջկանը իրեն համար խմելու ջուր բերելու կամ ձեռքին երեսը լվանալու ջուր ածելու և երբեք ինքը չէր վերցնի կուժը և չէր գնա աղբյուրը ջրի։ Ըստ ավանդական կարգի աղբյուրից կուժով ջուր բերելը կնոջ, հատկապես տան մեջ եղած փոքր կնոջ, այն է փոքր հարսի կամ տան հասունացած աղջըկա պարտավորությունն էր[110]։

Ճաշում էին տղամարդիկ և կանայք առանձին, կանայք տղամարդկանցից հետո, թե՛ խնճույքների ժամանակ, թե՛ ամենօրյա հացկերույթին. միայն տան պառավ մեծ կնոջը երբեմն թույլ էր տրվում տղամարդկանց հետ հացի նստելու։

Տղամարդու խառնվելը տան ներքին կարգադրություններին համարվում էր տղամարդուն անվայել, ստորացնող բան։ Կնոջ վրա ձեռք բարձրացնել, կնոջը ծեծել տղամարդուն չսազող, անվայել բան էր ճանաչվում։ Սովորաբար բարկացած տղամարդը դիմում էր հայհոյանքին և այդ ուշունցի ժամանակ հասնում էր և՛ կնոջը, և՛ նրա հորն ու մորը, և՛ բոլոր ազգականներին, բայց կնոջ ծեծելը, նրա վրա ձեռք բարձրացնելը շատ սակավ դեպքերում էր տեղի ունենում։ Զանգեզուրում էլ, ինչպես այլ հայաբնակ գավառներում,

---

109 Հաստատվող նոր սոցիալիստական կենցաղը սկզբնական ժամանակներում հանդիպել է պառավ կանանց խիստ դիմադրությանը, քանի որ նրանք ձգնում էին պահպանել տանից կնոջ դուրս չգալու և հողամշակման ու անասնապահության հետ կապված աշխատանքներին չմասնակցելու հին ադաթը։ Առաջավորների և հետամնացների պայքարն ավարտվեց նորի հաղթանակով։

110 Ինչպես վերը ասացինք՝ տավար, ոչխար, նույնիսկ հավ մորթելը կնոջ համար անթույլատրելի էր. նա նույնպես չէր մասնակցում որսի, առհասարակ ազատված էր այն ամենից, ինչ որ կապված էր կենդանուն մահ պատճառելու հետ, որովհետև կինը կոչված է կյանք տվող լինելու։